ոչ եւս համարձակեցան Յոյնք բռնադատել զոք, եւ ինքեանք իսկ քայքայեալք 'ի Տաճկաց եղեն իբրեւ զմեզ տառապեալք։ Եւ ապա որք մնացեալ էին յԵրուսաղէմ 'ի Հայոց՝ գտին զՀանգիստ. նաեւ Ասորիք և Եգիպտացիք։

Իսկ յետոյ 'ի Ծանրութենէ տաճկական հարկացն նեղեալք, և վասն աւերանացն երկրին Հայոց, զի ոչ բերէին զտուրս գիւղօրէիցն՝ զոր պարգեւեալ էին Թագաւորքն և իշխանքն Հայոց, վասն որոյ և նոցա չկարացեալ համբերել՝ թողին զտեղիս իւրեանց, եւ հնգետասան վանք մնայն մնաց 'ի ձեռս Հայոց. ոմանք 'ի լեառն Զիթենեաց, այլք մերձ 'ի Բեթղեհէմ, և այլք յեզր գետոյն Յորդանանու, նա եւ 'ի լեառն Փորձութեան, եւ յանապատ Փրկչին, և 'ի լեառն Թափորական, և 'ի Հերմոն հանդէպ Թափորայ. եւ յեզր Տիբերական ծովուն, եւ անդ՝ ուր Քրիստոս զեօթն նկանական ետ հինգ հազարացն։

Յայսոսիկ տեղիս մնացին բազմութիւն կրօնաւորացն Հայոց։

Զայս Պատմութիւն գտաք 'ի Գաղատիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, եւ անտի օրինակեալ գրեցաք 'ի ծանօթութիւն և 'ի տեղեկութիւն ազգիս Հայոց։

Մակարիոս Յոյն Պատրիարք Անտիոքայ 'ի գիրս Մեղուանոց կոչեցեալ. Եր. 228 ասէ, « Գլխաւորք եկեղեցականացն Հայոց եւ Ասորւոց 'ի Կիլիկիա, 'ի Միջագետս և 'ի Հայաստան՝ խօսէին զլեզու Հայոց և Ասորւոց, և գիտէին զգպրութիւն երկուց ազգաց, ուսանէին նաեւ Յունարէն սակս վիճաբանութեան։ Սոքա բաժանեցան յընդհանուր եկեղեցւոյ զկնի չորրորդ ժողովոյն (Քաղկեդոնի), և մի մասն Հայոց ոչ միաբանեցան ընդ նոսա 'ի հաւատս, ասել մի բնութիւն եւ մի կամք 'ի Քրիստոս, և ոչ բաժանեցան յեկեղեցւոյ, որ և կոչէին 'ի նոցանէ Ծայթ. բայց յեկեղեցական գիրս ուղղափառք ճանաչեն. և հաստատէ զայս անապատականն Նիքոն վանահայր Սիմոնի սքանչելագործի Վանաց 'ի Թուղթս իւր առ Պատրիարքն և առ վանահայրս Երուսաղէմի, թէ նոքա ուղղափառք են, և հրամայէ հաղորդիլ ընդ նոսա 'ի հոգեւորս. զի Պատրիարգունք Անտիոքայ և գլխաւոր եկեղեցականք հաղորդէին ընդ նոսա։ Եւ թէ բաղումք էին 'ի